

/Պատկերանիշ/

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

18 հոկտեմբերի 2022 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան՝
հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Դատարանի Նախագահ Է.Վ. Հայրիյան,

գեկուցող դատավոր՝ Գ.Ա. Սկրիպկինա,

դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրայիմովա, Ժ.Ն. Բայիշև, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն.

Նեշատևա, Վ.Խ. Սեյտիմովա, Ա.Է. Թումանյան, Ա.Ա. Ֆեդորցով, Կ.Լ.
Չայկա,

դատական նիստի քարտուղար Կ.Ս.Աբդիլդարեկովայի
մասնակցությամբ, հետազոտելով գործի նյութերը, լսելով գեկուցող
դատավորին, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության
Դատարանի Կանոնադրության 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-
րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության
դատարանի կանոնակարգի 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացությունը Եվրասիական
տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների
կենսաթոշակային ապահովման մասին 2019 թվականի դեկտեմբերի 20-
ի համաձայնագրի 3-րդ հոդվածի դրույթների պարզաբանման մասին
Ղրղզստանի Հանրապետության արդարադատության
նախարարությանն առընթեր Դատական ներկայացուցչության
կենտրոնի դիմումի վերաբերյալ:

I. Դիմողի հարցը

Ղրղզստանի Հանրապետության արդարադատության
նախարարությանն առընթեր Դատական ներկայացուցչության
կենտրոնը (այսուհետ՝ դիմումատու) դիմել է Եվրասիական տնտեսական
միության Դատարան (այսուհետ՝ Դատարան) Եվրասիական
տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների
կենսաթոշակային ապահովման մասին 2019 թվականի դեկտեմբերի 20-
ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 3-րդ հոդվածի
դրույթների պարզաբանման մասին դիմումով:

Դիմումատուն նշում է, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածին
համապատասխան՝ աշխատավորների կենսաթոշակային իրավունքների

ձևավորումն իրականացվում է կենսաթոշակային վճարների հաշվին՝ նույն պայմաններով և նույն կարգով, ինչ աշխատանքի տեղավորման պետությունների քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների ձևավորումը:

Համաձայնագրի վերոնշյալ հոդվածի հիման վրա Ղրղզստանի Հանրապետությունում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) անդամ պետությունների աշխատավորները պետք է վճարեն ապահովագրավճարներ Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Դիմումատուն նշում է, որ «Պետական սոցիալական ապահովագրության ապահովագրավճարների սակագների մասին» Ղրղզստանի Հանրապետության 2004 թվականի հունվարի 24-ի № 8 օրենքը ներկայումս ժամանակավորապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսում է ապահովագրավճարների սակագների այլ չափ՝ Ղրղզստանի Հանրապետության քաղաքացիների համար կիրառվող սակագների համեմատ: Ղրղզստանի Հանրապետության 2021 թվականի նոյեմբերի 15-ի № 132 օրենքը փոփոխություններ է կատարել վերը նշված օրենքում՝ հավասարեցնելով օտարերկրյա քաղաքացիների և Ղրղզստանի Հանրապետության քաղաքացիների համար ապահովագրավճարների հատկացումների չափը: Սակայն նման փոփոխություններն ուժի մեջ կմտնեն 2022 թվականի նոյեմբերի 1-ից:

Նշված Համաձայնագրի իրականացման ընթացքում դիմումատուի մոտ առաջացել է որոշ հարցերի հստակեցման անհրաժեշտություն, որի կապակցությամբ նա Դատարանին խնդրում է պարզաբանում տալ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1) արդյո՞ք Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետը մեկնաբանվում է որպես հիմք ԵԱՏՄ երկրների ժամանակավորապես բնակվող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ կիրառվող ապահովագրավճարների դրույքաչափերը (սակագները) (3%) բացառապես ԵԱՏՄ անդամ քաղաքացիների նկատմամբ կիրառվող դրույքաչափերին (27,25%) հավասարեցնելու համար, եթե ԵԱՏՄ անդամ պետության կիրառելի օրենսդրությամբ դրանք երկու տարբեր սակագներ են, որոնք կիրառվում են տարբեր կատեգորիաների անձանց նկատմամբ;

2) արդյո՞ք Ղրղզստանի Հանրապետությունում ժամանակավորապես բնակվող ԵԱՏՄ պետությունների քաղաքացիները, ղեկավարվելով 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով, պետք է վճարեն 27,25 տոկոսի չափով ապահովագրավճարներ Ղրղզստանի Հանրապետության քաղաքացիների հետ հավասար հիմունքներով, եթե Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությունը օտարերկրյա քաղաքացիների

համար սահմանում է 3%-ի չափով սակագին, իսկ սակագների բարձրացման (հավասարեցման) փոփոխություններն ուժի մեջ են մտնում միայն 2022 թվականի նոյեմբերից:

II. Ընթացակարգը դատարանում

Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնադրության 46-րդ կետին համապատասխան, որը Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի № 2 հավելվածն է (այսուհետ համապատասխանաբար՝ Կանոնադրություն, Պայմանագիր), Դատարանը՝ Միության անդամ պետության կամ մարմնի դիմումով իրականացնում է Պայմանագրի, Միության շրջանակներում գործող միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում:

Համաձայն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի № 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության Դատարանի Կանոնակարգի 72-րդ հոդվածի (այսուհետ՝ Դատարանի Կանոնակարգ)՝ պարզաբանման մասին դիմումների վերաբերյալ դատավարությունը ներառում է պարզաբանման մասին դիմումի, պարզաբանման մասին դիմումում նշված հարցին վերաբերող այլ փաստաթղթերի և նյութերի կամ այդ փաստաթղթերի և նյութերի վավերացված պատճենների ներկայացումը, ինչպես նաև Դատարանի կողմից խորհրդատվական եզրակացության նախապատրաստումը:

Դատարանի Մեծ կոլեգիայի 2022 թվականի հունիսի 20-ի որոշմամբ պարզաբանման մասին դիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի կողմից քննությանը գործի նախապատրաստման շրջանակներում պատասխաններ են ստացվել դիմողից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովից, Ղրղզստանի Հանրապետության Նախարարների կաբինետին առընթեր Ղրղզստանի Հանրապետության սոցիալական հիմնադրամից, Բելառուսի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությունից, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր Օրենսդրության և համեմատական իրավունքի ինստիտուտից, Ղազախստանի Հանրապետության Օրենսդրության և իրավական տեղեկատվության ինստիտուտից, «ՄԻՏՍՈ» միջազգային համալսարան» Բելառուսի արհմիությունների դաշնության ուսումնական հաստատությունից:

III. Դատարանի եզրահանգումները

Ղեկավարվելով Կանոնադրության 50-րդ կետով՝ Դատարանն իրականացնում է Պայմանագրի դրույթների պարզաբանում միմյանց միջև և Միության մարմինների որոշումների հետ դրանց համակարգային կապակցմամբ՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների և նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թվականի մայիսի 23-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի դրույթները (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա), համաձայն որոնց պայմանագիրը պետք է մեկնաբանվի բարեխղճորեն՝ այն սովորական իմաստին համապատասխան, որը պետք է տրվի պայմանագրի եզրույթներին դրանց համատեքստում, ինչպես նաև պայմանագրի առարկայի ու նպատակների լույսի ներքո:

1. Պայմանագրի «Աշխատանքային միգրացիա» 26-րդ բաժնի 96-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի ուժով անդամ պետությունները համագործակցություն են իրականացնում Միության շրջանակներում աշխատանքային միգրացիայի կարգավորման ոլորտի քաղաքականության համաձայնեցման, ինչպես նաև անդամ պետությունների աշխատավորների կողմից անդամ պետություններում աշխատանքային գործունեության իրականացման համար նրանց կազմակերպված հավաքագրմանն ու ներգրացմանը աջակցություն ցուցաբերելու շուրջ:

Համաձայն Դատարանի իրավական դիրքորոշման, որը ներկայացված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 7-ի խորհրդատվական եզրակացությունում, Միության իրավունքի իմաստով աշխատավորները Միության շրջանակներում ունեն միասնական կարգավիճակ և օգտվում են Պայմանագրով տրված իրավունքներից և օրինական շահերից:

Անդրադառնալով քննարկվող դիմումին, Դատարանի Մեծ կոլեգիան արձանագրում է, որ Միության շրջանակներում աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի ձևավորումը և աշխատանքային միգրացիայի խթանումն ուղղակիորեն կապված է անդամ պետությունների աշխատավորներին համապատասխան իրավունքների և երաշխիքների տրամադրման հետ, որոնց ներառում են կենսաթոշակային ապահովությունը:

Պայմանագրի 98-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ կետի ուժով անդամ պետությունների աշխատավորների և ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովությունը կարգավորվում են մշտական բնակության պետության օրենսդրությամբ, ինչպես նաև անդամ պետությունների միջև կնքված առանձին միջազգային պայմանագրին, սվյալ դեպքում՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի Համաձայնագրին համապատասխան:

2. Համաձայնագրի 14-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, վերջինս

ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը անդամ պետությունների կողմից կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Միության բոլոր անդամ պետությունները դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցել են ավանդապահին (Եվրասիական տնտեսական հանձնաժողովին) Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին՝ դրանով իսկ հայտնելով իրենց համաձայնությունը Վիեննայի կոնվենցիայի 24-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վերջինիս պարտադիր բնույթի հետ և ստանձնել 2021 թվականի հունվարի 1-ից Համաձայնագրով ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները կատարելու պարտավորություններ:

3. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատավորների կենսաթոշակային իրավունքների ձևավորումն իրականացվում է կենսաթոշակային վճարների հաշվին՝ նույն պայմաններով և նույն կարգով, ինչ աշխատանքի տեղավորման պետությունների քաղաքացիների կենսաթոշակային իրավունքները ձևավորումը: Համաձայնագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ աշխատանքի տեղավորման պետությունը Միության անդամ այն պետությունն է, որի տարածքում ձևավորվում են կամ ձևավորվել են աշխատավորի կենսաթոշակային իրավունքները:

Համաձայնագրի վերը նշված նորմերի պարզաբանումը՝ Պայմանագրի 96-րդ և 98-րդ հոդվածների հետ համատեղ, Դատարանի Մեծ կոլեգիային հիմք է տալիս եզրակացնելու, որ Միության անդամ պետությունների կողմից սահմանված կենսաթոշակային ապահովության իրավահարաբերությունների մասնակիցների վրա դրվում է վճարների վճարման պարտավորություն՝ աշխատավորների կենսաթոշակային իրավունքների ձևավորման, նրանց կողմից աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար: Միության իրավունքն իր հերթին աշխատանքային ռեսուրսների միասնական շուկայի կառուցման համար երաշխավորում է աշխատավորների կենսաթոշակային իրավունքների ձևավորման պայմանների և կարգի հավասարությունը, որոնց իրականացումն ապահովվում է ազգային օրենսդրությանը համապատասխան:

Դատարանի Մեծ կոլեգիան գտնում է, որ աշխատավորների կենսաթոշակային իրավունքների և աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների հարցերում հավասարության սկզբունքը, որը ամրագրված է Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի նորմում, ուղղակիորեն վերաբերում է նաև կենսաթոշակային վճարների՝ որպես կենսաթոշակային իրավունքների քաղաքիչներից մեկի ձևավորման

պայմաններին ու կարգին:

4. Դրդատանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, ինչպես նաև Դրդատանի Հանրապետության օրենսդրությունը համապատասխան ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը հանդիսանում են Դրդատանի Հանրապետության իրավական համակարգի անբաժանելի մասը: Միջազգային պայմանագրերի և միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների ու նորմերի կիրառման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

«Դրդատանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Դրդատանի Հանրապետության 2014 թվականի ապրիլի 24-ի № 64 օրենքի 24-րդ հոդվածի ուժով Դրդատանի Հանրապետության համար միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում հենց միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և ժամկետներում, ինչպես նաև միջազգային պայմանագրի նորմերին համապատասխան:

«Պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության մասին» Դրդատանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 21-ի № 57 օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ այն դեպքերում, երբ օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից է Դրդատանի Հանրապետությունը, նախատեսված են այլ կանոններ, քան սույն Օրենքում առկա կանոնները, կիրառվում են այդ միջազգային պայմանագրերով սահմանված կանոնները:

«Պետական սոցիալական ապահովագրության մասին» Դրդատանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 17-ի № 20 օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ապահովագրավճարների չափերը սահմանվում են «Պետական սոցիալական ապահովագրության ապահովագրավճարների սակագների մասին» Դրդատանի Հանրապետության օրենքով:

Դրդատանի Հանրապետության 2021 թվականի նոյեմբերի 15-ի № 132 օրենքով փոփոխություններ են կատարվել «Պետական սոցիալական ապահովագրության ապահովագրավճարների սակագների մասին» Դրդատանի Հանրապետության 2004 թվականի հունվարի 24-ի № 8 օրենքում և հաստատվել ապահովագրավճարների սակագների նոր դրույքաչափեր:

Դատարանի Մեծ կոլեգիան նշում է, որ Դրդատանի Հանրապետության ազգային օրենսդրությունը ԵԱՏՄ անդամ պետությունների աշխատավորների և աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային իրավունքների մասով համապատասխանում է Համաձայնագրին:

Այն հարցը, թե ինչ կարգով է Միության անդամ պետություններից յուրաքանչյուրում ներդրվում կենսաթոշակային վճարների նոր (միասնական) սակագինը, վերաբերում է նրանց ներքին իրավասությանը:

5. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանի Մեծ կոլեգիան Դրդգստանի Հանրապետության արդարադատության նախարարությանն առընթեր Դատական ներկայացուցչության կենտրոնի հարցերին տալիս է հետևյալ պատասխանները՝

5.1. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է կենսաթոշակային վճարների հաշվին կենսաթոշակային իրավունքների ձևավորման հավասար պայմաններ և կարգ և հիմք է հանդիսանում ԵԱՏՄ անդամ պետությունների աշխատավորների և աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների նկատմամբ կենսաթոշակային վճարների դրույքաչափերը (սակագները) հավասարեցնելու համար:

5.2. Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենը ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական համացանցային կայքում:

Նախագահող՝

Է.Վ.Հայրիյան

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրայիմովա

Ժ.Ն.Բայիշև

Դ.Գ.Կոլոս

Տ.Ն.Նեշատանևա

Վ.Խ.Սեյտիմովա

Գ.Ա.Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա.Ֆեդորցով

Կ.Լ.Չայկա